

ՍՍՐՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻՈՒ

ՀՈՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՆՏՐ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ

Յ. Մ. ՅԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ
ԱՐՇՐԱՏՅԵՆ ԴԱՀՏԱՎԱՅՐՈՒԹ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

Սերիա՝ խմբագրության
Գիտություն. վաստակավոր գործիչ Ա. Գ. ԱՐԱՆՅԱՆԻ

Պատ. խմբագիր՝
Գիտություն. վաստակավոր գործիչ Գ. Խ. ԱՂԱՅԵՅԱՆ.



Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Մեր հրկրի պարենային ուսուցանողների ավերացումը ներկայումս բացառիկ կարևոր նշանակություն ունի: Այդ խնդրի լուծումն ապահովող կարևոր միջոցառումներն են մեկը բանվորների և ծառայողների կողակալի ու անհատական բանջարածության լայն զարգացումն է: Այս կապակցությամբ խնդիր է դրված ընդարձակել կարտոֆիլի ցանքերի տարածությունը, որքան այդ հնարավոր է:

Մեր ուսուցողների կազմի արդյունաբերական և այլ ձեռնարկությունների, գյուղացիների, առևտրական ցանցի օժանդակ տնտեսությունները և կոլխոզներն անցյալ տարի կարտոֆիլի մշակման գծով զգալի նվաճումներ ունեցան: Ընդարձակվեց այդ կուլտուրայով զբաղեցրած տարածությունը, և երկիրն ստացավ ավելի շատ պարենային կարտոֆիլ:

Աշխատավորության պրակտիկան ցույց է տվել, որ անամերձ բանջարանոցներում մեկ քառակուսի մետր տարածությունից հնարավոր է ստանալ 1,5—2,5 կիլոգրամ կարտոֆիլ, եթե գործադրվեն մշակութային համար անհրաժեշտ ագրոմիջոցառումները:

Տաք շրջանների կլիմայական ու հողային պայմանները կարտոֆիլի մշակութային համար պահանջում են որոշ ձեռնարկումներ, որոնց կիրառումով հնարավոր է մեկ տարում ստանալ երկու լիարժեք բերք: Առաջին բերքը հնարավոր է հավաքել հուլիսի երկրորդ կեսին, իսկ երկրորդը՝ նոյեմբերի երկրորդ կեսին, երբ կարտոֆիլի բույսերը դաշտում ցրտահարված են լինում:

Հայաստանի այն գոտիներն ու շրջանները, որտեղ մշակվում է կարտոֆիլ, միանման կլիմայական ու հողային պայմաններ չունեն, ուստի հասկանալի է, որ մշակութային միջոցառումների ձևերն ու ժամկետները տարբեր շրջաններում միատեսակ լինել չեն կարող:

Հայտնի է, որ կարտոֆիլի բույսը պալարներ առաջացնում է հողի 15—20 սանտիմետր խորության մեջ, և դրանց աճը տեղի է ունենում ստորերկրյա պայմաններում: Պալարների նորմալ աճեցողութայն համար պահանջվում է փուխը, լավ թափանցիկ միջավայր, որն ապահովված լինի օդի, ջրի և ջերմութայն անհրաժեշտ քանակութայն: Լնդհանրապես կարտոֆիլը լավ է աճում փուխը, լավ մշակված, չկեղևակալող կամ թույլ կեղևակալող հողերում:

Այս իմաստով հողի տեսակի ճիշտ ընտրությունը կարտոֆիլի մշակութայն համար կարևոր հարցերից մեկն է:

Երևանի շրջակայքի հողերից կարտոֆիլի մշակութայն համար պիտանի են ոչ բոլոր տեսակի հողերը: Կարտոֆիլի մշակութայն համար պիտանի հողեր կարելի է ընտրել Շենդավթի, Նորադավթի ուղղութայն ընկած քաղաքամերձ վայրերում, ինչպես նաև քաղաքը շրջապատող այգիների պլատ տարածություններից, որոնք հաճախ դբաղեցվում են բանջարաբուստանային կուլտուրաներով:

Կարտոֆիլը վատ է աճում ծանր կավային հողերում, չի աճում ճահճոտ, խիստ խոնավ, ինչպես նաև ուժեղ աղակալած հողերում:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՍՈՐՏԵՐԸ

Աշխատավորութայն պահանջը որքան կարելի է շուտ բավարարելու նպատակով բանվորական կենտրոններին կից տնտեսությունների, ինչպես նաև բանվոր-ծառայողների կոլեկտիվ և անհատական բանջարանոցների ցանքերի համար պետք է օգտագործել կարտոֆիլի վաղահաս և միջահաս սորտեր:

Մեր ռեսպուբլիկայում կարտոֆիլի սեզանի սորտերից մշակվում են երկուսը՝ «Էպիկուր» (վաղահաս) և «Լորխ» (միջահաս): Թույլատրված է ժամանակավորապես ցանել նաև «Վաղահաս վարդագույն» և «Ժողովրդական» սորտերը:

Կարտոֆիլի վերը նշված սորտերը ճանաչելու, ինչպես և նրանց մշակութայն առանձնահատկություններն իմանալու համար անհրաժեշտ ենք համարում համառոտակի նկարագրել դրանցից երեքը:

Վաղահաս է, հայտնի է իր համեղությամբ, նսայած ձմեռելուց հետո համը մասամբ վատանում է: Տարածված է մեր Միության խոշորագույն բանվորական կենտրոնների և քաղաքամերձ անտեսություններում: Սովետական Հայաստանում տարածված է Ստեփանավանի, Ալավերդու, Նոր-Բայազետի և Կոսայքի շրջաններում:

Տնտեսական հատկանիւնները.— Ցանքի օրից մինչև բերքահավաքը տևում է 65—75 օր: Մի հեկտարից ստացվում է 120—150 ցնեստներ բերք: Հիվանդություններին համեմատաբար դիմացկուն է: Չմեռում է լալ: Ամառային (երիտասարդ ծլեցրած պալարներով) ցանք կատարելու համար անհրաժեշտ է գարնանն առանձնացնել հատուկ հողատարածություն և ցանքը կատարել ուշ (մայիսի 10-ին): Մի շարք տարիների մեր դիտողությունները թույլ են տալիս ասելու, որ ընդհանրապես կարտոֆիլի վաղահաս և ուշահաս սորտերն ամառային ցանքից (երիտասարդ պալարներով) շատ պակաս բերք են տալիս, քան տալիս է միջահաս «Լորիս» սորտը:

Արտաֆին բնորոշ հատկանիւնները.— Պալարն սպիտակ է, տակառածև, աչքերը խոր նստած: Թուփը միջահասակ է, վաղ թառամող, ցողունը՝ երկաթագույն: Տերևը՝ բաց-կանաչավուն, փայլուն, տերևամասերը խոշոր չեն, առաջին զույգ տերևամասերի տակ գտնվող փոքր տերևամասերը նստած են բանտիկածև կիպ, տերևի կենտրոնական ջղի վրա, ուղղված դեպի ցած. տերևամասերը սրտաձև են: Ծաղիկն սպիտակ է, ծաղկաբույլը՝ հավաք:

ՎԱՂԱՀԱՍ ՎԱՐԿԱԳՈՒՅՆ

Մեր ոեսպուբլիկայի կարտոֆիլացան տարբեր շրջաններում անվանում են «Փալալոս», «Ամսական» և այլն: Վաղահաս է, բերքը կարելի է հավաքել ցանքից 65—70 օր հետո: Շատ տարածված սորտ է, մշակվում է մեր Միության տարբեր մարզերում, նաև Անդրկովկասում: Մեր ոեսպուբլիկայում «Վաղահաս վարդագույնի» մաքուր օջախներ չկան, բայց գտնվում է կարտոֆիլի ցանքերում որպես խառնուրդ: Բանվորական կենտրոնների, քաղաքամերձ և անհատական անտեսությունների սպառողական կարիքները բավարարելու տեսակետից մեծ արժեք ունի:

Տնտեսական հասկանիչները.—Վազանաս է, շատ համեղ: Մի հեկտարից միջին հաշվով ստացվում է 80—130 ցենտներ բերք: Օսլա համեմատաբար քիչ է պարունակում (16 0/0), որ և պահանջվում է ընդհանրապես սեզանի կարտոֆիլի սորտերից:

Մեղ մոտ, ըստ առանձին ուսյոնների, օսլայի քանակը տատանվում է 19—20 0/0-ի սահմաններում: Համեմատաբար վատ է ձմեռում և ենթակա է սնկային հիվանդությունների:

Արտաքին բնորոշ հատկանիշները.—Պալարը երկարավուն է (վարունգած), բաց-վարդագույն, մաշկը նուրբ է ու հարթ, աչքերը երես են նստած, ունեն կիսալուսնաձև հոնք: Բույսի բունը հավաք է, ծիլը՝ բաց-կարմրամանուշակագույն: Այս սորտը իր պալարներն արտաքին հատկանիշներով միանգամայն տարբերվում է կարմիր գույնի մյուս սորտերից, օրինակ՝ «Վոլուման» ուշահաս սորտից, որի պալարները չնայած կարմրավուն են, բայց տարբերվում են իրենց ձևով. վերջիններս կլոր անկյունավոր են, աչքերը համեմատաբար խոր են նստած և հոնք չունեն:

Թուփը ցածր է, լավ տերևակալած, վաղ թառավող, ցողունը՝ անկյունավոր, գորշ գույնի: Տերեք խոշոր է, մուգ-կանաչ գույնի, փայլուն, գազախնային կենսա տերևամասը կախ ընկած, ծածկվում է վերջին գույլ տերևամասերով (սորտի համար բնորոշ հատկանիշ է): Ծաղիկն սպիտակ է, թուփն առատ ծաղկում է, սերմնարանի կտրվածքում նկատելի է բաց-կարմրավուն բիծ: Միության հյուսիսային պայմաններում պտուղ չի տալիս, սակայն Անդրկովկասում պտուղ տալիս է:

Լ Ո Ր Խ

Միջահաս է, ունիվերսալ թե սեզանի և թե գործարանային սորտ է: Համեմատաբար չորագիմացիուն է: Միության մեջ ներկայումս կարտոֆիլի ամենատարածված սորտերից է: Մեր պետությունների կարտոֆիլացան շրջանների ցանքերի ավելի քան 80 տոկոսը կազմում է այս սորտը:

Տնտեսական հասկանիչները.—Միջահաս է, շատ բերքատու, միջին բերքատվությունը մեկ հեկտարից 200—250 ցենտներ է: Մեր լեռնային շրջաններում օսլայի տոկոսը կազմում է 21—22: Համեղ է և կփելուց չի փխրվում: Ձմեռում է լավ և հիվանդություններով համեմատաբար պակաս է վարակվում:

Հարավի տաք շրջաններում միևնույն տարում տալիս է

երկու բերք: Ամռանը, հունիսի 15—20-ը, երիտասարդ ծլած պալարները կարելի է օգտագործել երկրորդ անգամ ցանք կատարելու համար:

Արտաբին բնօրը հասկանիչները.—Պալարն սպիտակ-դեղնավուն է, ձվաձև, աչքերը խորը չեն նստած: Բույսի բունը հավաք չէ: Պալարի ստորին մասը փոքր բլթակ ունի:

Թուփը բարձր է, նուրբ, լավ տերևակալած, ցողունը անկյունավոր է, ճյուղավորված և կանաչ գույնի:

Տերևը միջակ մեծության է, բաց-կանաչ, նուրբ ու հարթ տերևամասերով: Հաճախ դադաթնային կենտ տերևամասը միացած է իրենից ցած գտնվող տերևամասի հետ (սորտի համար բնորոշ հատկանիշ է):

Ծաղիկը բաց-վարդամանուշակագույն է, պսակաթերթիկների դադաթներն սպիտակ են: Սովորաբար պտուղ չի տալիս, սակայն մեր բամբակացան շրջաններում երիտասարդ պալարներով երկրորդ անգամ ցանք կատարելու դեպքում տալիս է պտուղ՝ միանգամայն հասունացած սերմերով:

ՍԵՐՄԱՅՈՒԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ ԳԱՐՆԱՆ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ցանքի համար անհրաժեշտ է գործադրել կարտոֆիլի 40—60 գրամ քաշ ունեցող առողջ պալարներ: Մեկ կիլոգրամ քաշի մեջ այդպիսի պալարներ լինում են 18—25 հատ: Եթե տնտեսութունը սերմացուի համար ունի ավելի խոշոր պալարներ, գերադասելի է ցանքը կատարել դրանցով, իսկ եթե սերմացուի խիստ կարիք է զգացվում, ցանք կարելի է կատարել կարտոֆիլի 10—15 գրամ քաշ ունեցող առողջ դադաթներով, մանր, 15—20 գրամ քաշ ունեցող ամբողջական պալարներով, պահեստում պալարների վրա առաջացած հաստ, 5—10 սանտիմետր երկարությամբ ծիլերով, դաշտում ցանքից հետո առաջացած կանաչ ծիլերով և այլն:

Ցանքից մի քանի շաբաթ առաջ անհրաժեշտ է յարովիզացիայի ենթարկել սերմացուն և ցանել միայն առողջ ծիլեր ունեցող պալարները: Յարովիզացիան կատարվում է լուսավոր, բայց ոչ արևոտ սենյակում, որտեղ ջերմությունը պետք է լինի 12—18° (Ցելսիուսի ջերմաչափով): Կարտոֆիլի սերմացուն երկու պալարի հաստությամբ փրում են արկղի մեջ կամ

հատկապես պատրաստված տախտակամածի վրա, ժամանակ առ ժամանակ շրջում են փոփոխ սերմացուն, որպեսզի ծլեն պալարի վրայի բոլոր աչքերը և միաժամանակ հեռացնում են հիվանդ կամ մաղանման ծիլեր տվող պալարները, որոնք իբրև սերմանյութ անպետք են: Արկղների կամ տախտակամածի մեկ քառակուսի մետրի վրա հնարավոր է տեղավորել 25—50 կիլոգրամ կարտոֆիլ: Յարովիզացիա կարելի է կատարել նաև շերտ-շերտ, փայտի թեփի մեջ, 15—18° ջերմության պայմաններում: Թեփը պետք է պահել խոնավ, բայց ոչ թաց վիճակում: Այս դեպքում յարովիզացիան կատարվում է ավելի արագ: Թեփի մեջ յարովիզացիայի համար չպետք է դնել խոշոր պալարներ, այդպիսի պալարների յարովիզացիան կատարվում է լույսի տակ, իսկ մանր և միջակ պալարները լավ յարովիզացիայի են ենթարկվում թեփի մեջ: Փայտի թեփի մեջ առաջացած ծիլերը լինում են հաստ և ունենում են լավ զարգացած արմատիկներ: Յարովիզացիան թեփի մեջ տևում է 15—17 օր:

Դաշտ տեղափոխելու ժամանակ անհրաժեշտ է յարովիզացված ու ծլած պալարների հետ խնամքով և զգուշութամբ վարվել, որպեսզի ծիլերը չջարդվեն:

Ցանքից երկու շաբաթ առաջ յարովիզացիայի պետք է դնել նաև կարտոֆիլի գազաթները:

Անհատական բանջարանոցում հնարավոր է օգտագործել պահեստում ծլած պալարների առողջ հաստ ծիլերը: Ծիլերի անջատումը պալարից պետք է կատարել ցանկու ժամանակ:

Անհատական բանջարանոցում կամ բավականաչափ սերմացու չունեցող բոլոր կոլեոզներում, որտեղ ցանքը ջրվում է կամ մթնոլորտային տեղումներն առատ են, ցանքի համար կարելի է օգտագործել դաշտում ծլած կարտոֆիլի կանաչ ծիլերը: Մեր դիտողությունները ցույց են տվել, որ Երևանի պայմաններում ավելի շուտ (հունիսի 5—10-ը) կարտոֆիլի բերք ստանալու համար հնարավոր է օգտագործել ջերմոցներում մարտի 10-ից ցանված պալարների կանաչած-արմատակալած ծիլերը, որոնք սածիլելու նպատակով դաշտ են տեղափոխվում ապրիլի 10-ից մինչև 15-ը:

Սածիլումը կանաչ ծիլերով (տես նկ. 1) կատարվում է հետևյալ կերպ. երբ դաշտում երևում են կարտոֆիլի առաջին ծիլերը (սովորաբար մեկ պալարից առաջանում են մի քանիսը՝ 3—7 և ավելի) մի փոքր բացում են հողի շերտը և զգուշութամբ

պոկում պալարից մեկ կամ երկու ծիլ՝ իրենց արմատով (թողնելով տեղում որոշ թվով ծիլեր) և խակույն ծածկում հողով: Դրանից հետո կատարում են սածիլումը նախապես պատրաստված հողամասում և ջրում են: Կալինինի մարզում մոտ տաս հազար հեկտարի վրա 1942 թվին կատարված փորձը ավելի փայլուն



Նկ. 1. Իաշում ծլած և սածիլելու պատրաստ կարտոֆիլ ծիլեր

հետևանք: Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր պրոֆ. Մ. Ս. Դունինի առաջարկությունը կալինինցիները հաջողությամբ կատարեցին և ստացան մեծ արդյունք՝ միջին բերքը մեկ հեկտարից՝ 8—10 տոնն: Առանձին հեկտարներից, որտեղ ապահովված էր անհրաժեշտ խնամքը, ստացվեց մինչև 24 տոնն բերք:

Հարավային ցածրադիր շրջաններում, ինչպես և լեռնային ու նախալեռնային, ջրովի ու խոնավ պայմաններում սածիլումը կարելի է կատարել հետևյալ կերպ: Յանքի ժամանակ ցանած յուրաքանչյուր շարքի կողքի շարքը չցանել, և երբ կարտոֆիլի ծիլը հողից դուրս գա ու հասնի 5—8 սանտիմետր բարձրության, հարևան ծլած շարքից զգուշությամբ անջատել ծիլերի մի մասն ախպես, ինչպես սովոր է վերևում, և սածիլել կողքի չցանած շարքում ու ջրեր:

Սածիլումը պետք է կատարել վաղ առավոտյան, երեկոյան դեմ և ամպամած օրերին: Հետագայում, եթե սածիլը չի բունել, պետք է նույն ձևով կանաչ ծիլերով վերանորոգում կատարել:

ՀՈՂԱՄԱՍԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

Կարտոֆիլը պետք է ցանել փափուկ, լավ մշակված ու մոլախոտերից ազատ հողամասերում: Այդ հողամասերի հերկն անհրաժեշտ է կատարել աշնանը՝ 25—30 սանտիմետր խորությամբ (նախախոփիկ ունեցող գութանով) և առանց փոցխելու թողնել մինչև դարուն: Գարնանը, առաջին իսկ հնարավորության դեպքում (հողամասի քեշի ժամանակ), կատարել 13—15 սանտիմետր խորությամբ կրկնավար: Անհատական բանջարանոցներում հողը կարելի է փորել վաղ գարնանը նաև բահով, երբ հողը քեշի է եկել:

Վարն անելուց առաջ ընդհանրապես դաշտը պարարտացնում են գոմաղբով կամ թե հանքային պարարտանյութերով: Մեկ հեկտարի համար պահանջվում է գոմաղբ՝ 20—30 տոնն կամ խտունաղբ՝ 15—20 տոնն և լավ պահած մոխիր՝ 0,5 տոնն: Կարելի է տալ հանքային պարարտանյութ մեկ հեկտարին—ամոնիում սուլֆատ՝ 3 ցենտներ, սուպերֆոսֆատ՝ 4 ցենտներ, կալիումական աղ (40% -անոց)՝ 2 ցենտներ: Լավ արդյունք է ստացվում, երբ գոմաղբի հետ արվում են նաև նշված հանքային պարարտանյութերը: Որպես պարարտանյութ կարելի է օգտագործել խառնաղբը, խամ ճմահողը, առունների տիղմը, ճանապարհի փոշին, փոստի կամ աթարի մոխիրը և այլն:

Մոխիրը որպես պարարտանյութ լավ արդյունք է տալիս, երբ կարտոֆիլը տնկելու ժամանակ բացած փոսերի մեջ լցնում են մեկ բուռ, խառնում հողի հետ և ապա միայն կատարում ցանքը: Թարմ գոմաղբով ծանր կավային և ճահճային հողերում պարարտացում չպետք է կատարել: Ընդհանրապես թարմ գոմաղբով պարարտացրած հողերում կարտոֆիլի պալարը ենթակա է հիվանդութիւյունների: Վարից կամ փորելուց հետո անհրաժեշտ է դաշտի երեսը մաքրել մոլախոտերի մնացորդներից (կոճղարմատները պետք է փորելու ժամանակ անսպաժան հավաքել), հարթել՝ մեծ հողամասերում զիգ-դագով, իսկ բանջարանոցներում՝ ձեռքի երկաթե փոցխով, բաժանել շրտարների, մարդոցի և ապա ցանել: Մարզի երկարությունը հարմար է վերցնել 25—30 մետր, իսկ լայնքը՝ 2 մետր 10 սանտիմետր: Ծանր կավային հողերում խիստ կարևոր է մինչև ցանքը հողը կրկնավարել կամ երկրորդ անգամ փորել:

ՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԵՂԱՆՍԿԸ

Յածրագիրը ապրանքներում, ինչպես նաև երևույնի քաղաքամերձ օժանդակ տնտեսություններում ու անհատական բանջարանոցներում, կարտոֆիլի ցանքը պետք է կատարել որքան հնարավոր է վաղ: Նայած տարվա եղանակին, կարտոֆիլի ցանքը կարելի է կատարել մարտի երկրորդ կեսին կամ ապրիլի սկզբին: Վաղ ցանքի միջոցով հնարավոր է խուսափել ամռան շոգերից, որ այնքան մեծ չափով իջեցնում են կարտոֆիլի բերքատվությունը: Շոգ պայմաններում կարտոֆիլի պալարների աճը դադարում է, և դրա փոխարեն սկսում են փարթամորեն աճել վերերկրյա ցողունները:

Ցանքը կատարվում է մարգոցված մարգերի մեջ, երեք շաբաթանով կամ ձիու կուլտիվատորով:

Լեռնային և նախալեռնային գոտու կարտոֆիլացան կուլտիվացիաները գործադրում են կարտոֆիլ տնկելու մի քանի եղանակ՝ արորով, գութանով, բուկլիցով և հատուկ կարտոֆիլացան մեքենաներով:

Շաբաթների հեռավորությունը մեկը մյուսից պետք է անել 70 սանտիմետր, իսկ բույսերի միջև, խոշոր պալարների համար՝ 35—40 սանտիմետր, զազաթների համար՝ 25—30 սանտիմետր և սածիլների համար՝ 20—25 սանտիմետր: Փոսերի խորությունը, որտեղ պետք է տնկվի կարտոֆիլը, պետք է լինի 8—10 սանտիմետր:

Ծմակ կամ խոնավ հողերում կարտոֆիլի ցանքը պետք է կատարել թմբերի գազաթների վրա, որպեսզի հողում եղած ավելորդ խոնավության պատճառով պալարները չսեխեն: Մեկ բնում պետք է տնկել՝ ամբողջական կարտոֆիլի միջակ պալար՝ մեկ հատ, մանր պալար՝ 2 հատից ոչ ավելի, զազաթ՝ 2—3 հատ (նայած մեծությանը, զազաթի վրա եղած աչքերի թվին ու գազաթի քաշին. եթե գազաթի քաշը մեծ է և աչքերը շատ են, յուրաքանչյուր բնում պետք է տնկել մեկ հատ), պահեստում ծլած կարտոֆիլի հաստ ծիլեր՝ 2 հատ: Ծիլը պետք է տնկել այնպես, որ հողի երեսից 1—1,5 սանտիմետր բարձր լինի: Կանաչ սածիլով ցանք կատարելու դեպքում մեկ բնում պետք է տնկել 2 հատ: Յածրագիրը տաք շրջաններում, կարտոֆիլի ցանքը կատարելուց հետո, եթե հողն սկսում է արագությամբ չորանալ, պետք է ջրել, իսկ եթե մթնոլորտային

տեղումները շատ են և հողը խոնավ է, ջուր չպետք է տալ մինչև ծիլերի հողից դուրս գալը:

ԳԱՐՆԱՆ ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

Կարտոֆիլի բարձր բերքն ապահովելու համար առանձնահատուկ նշանակություն ունի ցանքի խնամքը:

Սովորաբար կարտոֆիլը ծլում է ցանելուց 20—25 օր հետո: Առանձին հողամասերում, երբ հողն իր մեջ չունի բավարար քանակություն ջերմություն, կամ կարտոֆիլի պալարը խորն է տնկված (մեծ մասամբ այդ տեղի է ունենում, երբ ցանքը կատարվում է արորով կամ գուլթանով), կարտոֆիլը ծլում է ավելի ուշ՝ տնկելուց 35—40 օր հետո: Գարնան անձրևաջրերի հետևանքով այդ ժամանակամիջոցում կարտոֆիլի հողամասի երեսն սկսում է կեղևակալել, պնդանալ, սկսում են աճել զոնազան մուխոտեր (չալիք, փուշ և այլն): Մուխոտերը խիստ քայտաբար են ազդում կարտոֆիլի բույսի աճման ու նրա հետագա զարգացման վրա և իջեցնում են նրա բերքատվությունը:

Որպեսզի կարտոֆիլի ծիլն աճի, անհրաժեշտ է ոչ պակաս, քան 7 աստիճան ջերմություն, ավելի բարձր ջերմությունն արագացնում է կարտոֆիլի ծլումը, բայց 25 աստիճանից բարձր ջերմության պայմաններում կարտոֆիլի ծլումը խիստ դանդաղում է:

Կեղևակալած հողում տնկված պալարը սահմանափակ քանակությամբ օդ և ջերմություն է ստանում, որի հետևանքով ծիլն ուշ է հողից դուրս գալիս:

Կարտոֆիլի համար աճման նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով, անհրաժեշտ է ցանքից 7—10 օր հետո հողը 1—2 երես խաչաձև փոցխեր:

Մեր Միության կարտոֆիլացան ստախանովականների փորձերը ցույց են տվել, որ ցանքերը փոցխելու միջոցով կարտոֆիլի բերքատվությունը բարձրանում է 20—25 տոկոսով: Փոցխելու հետևանքով փշրվում է հողի կեղևը, խախտվում է մագաղանությունը, որի շնորհիվ հողում պահվում է խոնավություն, իսկ սա նպաստում է ծլող պալարի արմատների լավ զարգացմանը: Փոցխելու հետևանքով առատորեն օդ է թափանցում հողի մեջ, արմատախիլ են արվում նորածիլ մուխոտերը,

որոնք հետագայում չորանում են արևի ճառագայթների տակ,
և, վերջապես, կարտոֆիլի ծիլերը հողից շուտ են դուրս գալիս:
Հայտնի է, որ մոլախոտերը մեծ քանակությամբ աննդա-
նյութեր և ջուր են վերցնում հողից, ուստի մոլախոտերի քաղ-
հանք, նրանց վերացնելը ցանքերի միջից՝ ամենակարևոր և
անհետաձգելի աշխատանքներից մեկն է: Եթե դաշտերում առան-
ձին փոքր տարածությունների վրա երևում են մոլախոտեր, հատ-
կապես չայր և փշեր, առանց սպասելու կարտոֆիլի ծիլերի հողից
դուրս գալուն, անհրաժեշտ է հողուրազներով, «շեղբիկներով»
քաղհանել այդ մոլախոտերը: Երբ կարտոֆիլի ծիլերը հատ ու
կենտ են դուրս գալիս հողից, անհրաժեշտ է կրկին փոցխել
դաշտը: Այս միջոցով հնարավորություն է ստեղծվում թուլաց-
նել կարտոֆիլի մատղաջ ծիլի բուկը, առատ օդ և ջերմություն
տալ ծյող պալարի արմատիկներին. փխրեցման շնորհիվ նաև
մանրանում են կոշտերը, որոնց տակից չեն կարողանում դուրս
գալ կարտոֆիլի մատղաջ ծիլերը:

Կարտոֆիլի ցանքը փոցխելիս պետք է հետևել, որ ծլած
պալարները հողի երեսը չընկնեն. դրա համար անհրաժեշտ է
փոցխի հետևից ունենալ աշխատողներ, որպեսզի հողի երեսն
ընկած պալարներն անմիջապես նորից տնկեն հողում:

Պետք է փոցխել կարտոֆիլի թե՛ ջրովի և թե՛ անջրդի
հողամասերը: Այն հողամասերում ու առանձին հողակտորներում,
որոնք խիստ խոնավ են, փոցխում չպետք է կատարել: Ինչպես
արդեն ասել ենք, նման հողերում կարտոֆիլի ցանքը սովորա-
բար կատարվում է թմբերի գազաթների վրա: Այդ թմբերը
մեծացնում են հողի մակերեսը, որը նպաստում է հողի ավե-
լորդ խոնավության գոլորշիանալուն, այլապես ավելորդ խոնա-
վությունից կարտոֆիլի պալարները կնեխեն: Բացի այդ՝
թմբերի միջոցով հողն անհամեմատ ավելի շատ ջերմություն է
կլանում, որ այնքան անհրաժեշտ է նման հողերում մշակվող
կուլտուրական բույսերի համար:

Կարտոֆիլի ցանքերի փխրեցումը, բուկլեցը և ջուր տալն
անհետաձգելի և կարևորագույն աշխատանքներ են: Քաղհան-
փխրեցումը պետք է կատարել այնքան անգամ, մինչև որ կար-
տոֆիլի ցանքերը լինեն մաքուր ու փխրուն վիճակում: Այդ
աշխատանքները պետք է սկսել, երբ կարտոֆիլի նորածիլ
բույսերի շարքերը երևում են դաշտում: Քաղհան-փխրեցումն
անհրաժեշտ է կատարել այնպես, որ հողից դուրս եկած կար-

տոֆիլի մատղաշ ծիւղերը հողով չծածկվեն և առհասարակ հողի թմբեր չառաջանան: Կարտոֆիլի բույսն իր ամման առաջին շրջանում պահանջում է առատ օդ, ջերմություն ու խոնավություն, և եթե քողհանի կամ փխրեցման աշխատանքների ժամանակ նորածիլ բույսը ծածկվի հողով կամ նրա բուկը լցվի ավելի շատ հող, այդ դեպքում նրա ամը կղանդաղի: Կարտոֆիլի բույսի ամը զանդաղում է նաև այն դեպքում, երբ թփի տակ փխրեցում չի կատարվում: Իրա համար անհրաժեշտ է հենց սկզբում հողուրազներով, քեթմեններով կամ փխրեցնող մեքենայով փափկացնել կարտոֆիլի թփի շուրջը, այնուհետև փխրեցնել միջլարքային տարածությունները, որը կարելի է կատարել ձիաքարը գործիքով կամ բահերով:

Կարտոֆիլի բուկը պետք է տալ, երբ բույսերը 15—18 ասնտիմետր բարձրություն ունեն: Առաջին անգամ բուկ տալու ժամանակ կարիք չկա շատ հող տալ. հողի շերտը պետք է ավելացնել աստիճանաբար՝ հետագա բուկ տալու ժամանակ:

Հայտնի է, որ կարտոֆիլի բույսի ստորերկրյա մասերում՝ արմատի ու ցողունի միջև ընկած տեղերում առաջանում են ընձյուղներ, որոնց վրա էլ զոյանում են սլաշարները: Եթե բուկը տալու ժամանակ այս կարևոր հանգամանքն աչքաթող արվի, և ցողունի շուրջը հողի հաստ շերտ գոյանա, այլ խոսքով՝ բարձր թմբեր կազմվեն, կարտոֆիլի բերքը կպակասի: Ահա թե ինչու բուկ տալու ժամանակ հողի շերտը պետք է ավելացնել աստիճանաբար և կարտոֆիլի բույսը հողից դուրս դալուց հետո բուկ չտալ, այլ խոր փխրեցնել, որ առաջանան ընձյուղներ:

Առաջին բուկը տալուց հետո դաշտում պետք է երեան հազիվ նշմարելի թմբեր, երկրորդ և երրորդ բուկ տալու ժամանակ կարելի է թմբերն աստիճանաբար մեծացնել:

Ջրովի և խոնավությամբ ապահովված հողերում կարտոֆիլի բուկը արվում է 2—3 անգամ, իսկ անջրղի հողերում, եթե ամռան ամիսները չորային են, բուկը չպետք է տալ, այլ պետք է խոր փխրեցում կատարել: Եթե խոնավ եղանակներ են լինում (օրինակ՝ Ստեփանավանի, Կալինինոյի, Կիրովականի շրջաններում), բուկ կարելի է տալ 1—2 անգամ, ավելի խոնավության դեպքում կարելի է տալ նույնիսկ 3 անգամ, բայց միշտ պետք է նկատի ունենալ, որ հողի շերտն աստիճանաբար ավելացնելիս՝ ընդհանուր ամամբ 20—30 ասնտիմետր բարձրությունից չպիտի անցնի:

Կարտոֆիլի ցանքերը պետք է պահվեն փուխը և խոնավ լինակում: Յածրադիր շրջաններում առաջին շուրը պետք է տալ կարտոֆիլի ցանքից 7—12 օր հետո: Ավելի շատ շուր պահանջվում է ծաղկելուց առաջ և ծաղկելու ժամանակաշրջանում. այդ ժամանակ ցանքերը պետք է ջրվեն յուրաքանչյուր 8—9 օրը մի անգամ: Յուրաքանչյուր ջրից հետո, հողի քեշի ժամանակ, շարքերի մեջ պետք է փխրեցում կատարել: Փորձերը ցույց են տվել, որ հունիսյան շուրը պայմանավորում է կարտոֆիլի գոյացող պալարների քանակը, իսկ հուլիս—օգոստոսյան շուրը՝ նրանց կշիռը և բերքի քանակը: Բացի ջրից, անհրաժեշտ է հեռանել կարտոֆիլի անեցողութանը և ժամանակին տալ ախ սննդանյութերը, որոնց պահանջը նա պետք է:

Եթե բանջարանոցը չի պարարտացված կամ քիչ է պարարտացված և բույսերի աճը համեմատաբար թույլ է, անհրաժեշտ է սնուցում տալ: Սնուցման համար կարելի է օգտագործել թուխաղբ, ըստ որում յուրաքանչյուր թփին պետք է տալ 10 գրամ՝ 8—10 բաժակ ջրի մեջ խառնված: Կարելի է օգտագործել հանքային պարարտանյութեր: Վերջիններս շաղ են արվում թփի շուրջը՝ 5—6 գրամի չափով, հողուրագով ձածկվում և ջրվում: Հանքային պարարտանյութերով սնուցում տալու ժամանակ պետք է զգուշ շաղ տալ, որ կարտոֆիլի տերևների վրա պարարտանյութերը չթափվեն և տերևները վրա այրվածքներ չառաջանան:

Կարտոֆիլի բարձր բերք ստանալու համար կարևոր է, որ նշված աշխատանքները կատարվեն ժամանակին և բարձր որակով:

ԿԱՐՏՈՓԻԼԻ ԲԵՐՔԱՆԱԿՎԱԿԸ

Յածրադիր ուայոններում, քաղաքներձ տնտեսություններում, ինչպես և օժանդակ բանջարանոցներում կարտոֆիլի բերքը կարելի է հավաքել, երբ թփերի տակ երիտասարդ պալարներն սկսել են ծլել: Այդ լինում է հուլիսի առաջին կեսին:

Բերքահավաքը պետք է կազմակերպել այնպես, որ առաջին հերթին ապահովվի տնտեսության սերմացուի պահանջը՝ երկրորդ անգամ ցանք կատարելու համար: Հողում ծլած երիտասարդ պալարները նույն օրը խնամքով պետք է տեղափոխել նախապես մշակված հողամասը և շտապ ցանել: Կարտոֆիլը հավաքելու աշխատանքը կհասրին (շոգ ժամանակ) պետք է դադարեցնել և կատարել առավոտն ու երեկոյան դեմ, իսկ ամպամա-

ծության զհպարում՝ ամբողջ օրը: Եթե հողում ծլած պալարների քանակությունը չի ապահովում տնտեսութեան պահանջը, պետք է ընտրել չծլած միանգամայն առողջ պալարներ և դնել ծլեցման: Պալարները տեղափոխելու ժամանակ արդելվում է մետաղյա արածայր գործիքներ բանեցնել:

Բեքահավաքից հետո դաշաը պետք է փոցխել կրկնակի անգամ՝ գեղ-զագով և հավաքել արտում մնացած կարտոֆիլը:

ԿԱՐՏՈՅԻԼԻ ԵՐԿՈՒ ԲԵՐՔԻ ՄՍԱՅՈՒՄԸ ՄԵՆ ՏԱՐՈՒՄ

Հարավի տաք ռազոններում, որտեղ բույսերի վեգետացիան համեմատաբար երկար է լինում և կլիմայական պայմանները բարենպաստ են, հնարավոր է նույն տարում ստանալ կարտոֆիլի երկու բերք:

Հայաստանի բամբակացան շրջանների աշխատավորությունը լավ ծանոթ է «ամառնամուտ» կուլտուրաների մշակմանը: Հացարույսերի հնձից հետո նրանք խոզանատեղը վարում և ցանում են բանջարա-բոստանային կուլտուրաներ, օրինակ՝ ձմերուկ, վարունգ, սեխ, կորեկ, եգիպտացորեն, լոբի, ոսպ, բոգի, վաղահաս կաղամբ և կանաչեղեն:

Վերջին երեք տարում մեր կոլտոգները մասսայաբար ցանում են շաքարի ճակնդեղ և կարտոֆիլ:

Սոզանացան կուլտուրաների մեջ կարտոֆիլի, որպես լայն սպառողական անհրաժեշտության, մշակությունն իր առանձնահատուկ տեղն ունի:

Տաք շրջանների աշխատավորութեանը դեռ շատ վաղուց հայտնի է, որ երբ կարտոֆիլը դարնանն ուշ է ցանվում, ստացվում է վատորակ և շատ քիչ բերք կամ երբեմն բոլորովին բերք չի ստացվում: Գիտությունն այս երևույթը բացատրում է բարձր ջերմութեան առկայությամբ, որը համընկնում է պալարների առաջացման և նրա աճի շրջանի հետ (հուլիս և օգոստոս ամիսներին):

Պարզված է, որ կարտոֆիլի բույսը հողի ջերմութեան 29—35 աստիճանում ալլես պալարներ չի առաջացնում և միայն ընձյուղներ է տալիս առատութեամբ: Օդի 35 աստիճան ջերմութեան պայմաններում կարտոֆիլի բույսն ասիմիլացիա շատ թույլ է կատարում, իսկ 45 աստիճանի ժամանակ նրա կենսական պրոցեսները գրեթե կանգ են առնում: Հայտնի է, որ եթե

A 18921

բույսի համար անհրաժեշտ ֆակտորները պահանջված չափից խիստ պակաս կամ ավելի են լինում, ապա այդ հանգամանքը խանգարում է անճեղդուլթյան հետագա նորմալ ընթացքին և բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա: Կարտոֆիլի բույսն ընկնելով համեմատաբար բարձր ջերմային պայմանների մեջ, իհարկե, դեռևս չի մեռնում: Եթե նրա աճման ու զարգացման համար բոլոր հիմնական պայմանները կան, բացի անհրաժեշտ քանակությամբ ջերմությունից (որը ավյալ դեպքում պահանջածից շատ բարձր է), ապա ջերմության տանելի աստիճանը նպաստում է միայն որոշ օրգանների զարգացմանը: Նույնն ենք տեսնում մեր սեպտեմբրիկայի բամբակացան ռայոնների պայմաններում: Կարտոֆիլի բույսի օրվա պատրաստած պարզ ածխաջրերը փոխանակ պլալրների մեջ կուտակվելու, օդատարժվում են վերերկրյա մասերի (ցողունների) կողմից: Ահա այդ է պատճառը, որ ցողունները փարթամ աճում են, խկ այդ նույն բույսերի առաջացրած պլալրները մնում մանր, անձե, վատորակ: Դրա հետևանքով բերքը շատ պակաս է ստացվում:

Բացի դրանից՝ բարձր ջերմային պայմաններում (նույնիս և օգոստոս ամիսներին) հողի մեջ գոյացած երիտասարդ մանր պլալրներն սկսում են ծլել և առաջացած մատղաշ ցողունների վրա գոյացնել նոր պլալրներ: Այս երևույթը կոչվում է կարտոֆիլի ալյասերում, որի դեմ պայքարելու հիմնական միջոցներից մեկը զարնան և ամուսն ցանքի համար որպես սերմացու առողջ պլալրների ընտրությունն է: Սակայն հարավի տաք շրջաններում նախորդ տարվա կարտոֆիլը ամառային ցանքի համար որպես սերմացու պահելը կապված է մեծ դժվարությունների հետ: Գարնան և ամռան շոգ ամիսներին այդ ռայոններում, շնորհիվ բարձր ջերմության, կարտոֆիլի պլալրները պահեստատեղերում սկսում են չմշկվել, հիվանդանում են զանազան սնկային ու բակտերիալ հիվանդություններով և մեծ մասամբ փտում: Դրա համար անհրաժեշտ էր զտնել այնպիսի միջոց, որ հնարավոր լիներ տաք ռայոններում առողջ վիճակում պահել սերմացուն և կատարել կարտոֆիլի ամառային ցանք՝ բավարարելով աշխատավորության պահանջն այս կարևոր սննդամթերքով:

Բերքահավաքից հետո կարտոֆիլի պլալրները սովորաբար 2—3 ամիս չեն ծլում: Պլալրների չծլելու այդ ժամանակաշրջանն ընդունված է անվանել հանգստի շրջան: Ուստի, տաք

ռայոններում հանգստի շրջանի ակտիվությունը պակասեցնելու միջոցով հնարավոր կլինի օգտագործել կարտոֆիլի երիտասարդ պլանտները որպես սերմանյութ՝ նույն տարում երկրորդ անգամ ցանք կատարելու համար:

Իհն շատ վաղուց մի շարք ականավոր գիտնականներ (Տիմիրյազև, Կլեբս, Իեննի, Շմիդտ, Մյուլլեր-Տուրգաու) զբաղվել են կարտոֆիլի և այլ բույսերի հանգստի շրջանի ակտիվությունը կրճատելու հարցերով: Ուսանց հաջողվել է դանազան արհեստական միջոցներով (քիմիական դանազան նյութերի ազդեցությունով, ծխի մեջ պահելով, կամ պլանտի վրա վերքեր՝ առաջացնելով) ձեռնարկ կարտոֆիլի երիտասարդ պլանտները 6—12 օրում, բայց ձևացման այդ կզանակներն արտադրություն պայմաններում անկիրառելի են իրենց պակաս էֆֆեկտիվությունը և մեծ ծախսերի պատճառով: Հետևապես, անհրաժեշտ էր կարտոֆիլի երիտասարդ պլանտները ձեռնարկել համար գտնել այնպիսի եղանակ, որը հնարավորություն տար մեծ տարածություններ ցանել, միաժամանակ դյուրամատչելի լինել աշխատավորության լայն մասաներին և մեծ ծախսեր չպահանջեր:

Տաք ռայոնների գյուղացիներին դեռ շատ վաղուց հայտնի է, որ ուշ գարնանը ցանված միջահաս կարտոֆիլի երիտասարդ պլանտները հունիսի վերջերին և հուլիսի մեջ ծլում են:

Մի շարք տարիների (1937 թվից մինչև 1942 թիվը ներառյալ) մեր փորձնական աշխատանքները և գիտողությունները ցույց են տվել, որ եթե անջատենք կարտոֆիլի թփի տակ արդեն ծլած ու արմատակալած երիտասարդ պլանտները (տես նկ. № 2) և իսկույն տնկենք լավ մշակված խոնավ հողում, ստացվում են փարթամ աճ ունեցող բույսեր, որոնք տալիս են միանգամայն առողջ ու մեծ պլանտներ: Այդ բույսերի առանձին պլանտները երբեմն կշռում են 600 գրամ: Այս միջոցառումը մատչելի ձևերից մեկը կարող է լինել արտադրության պայմաններում երիտասարդ ծլած պլանտներով ամառային ցանք կատարելու համար:

Իացի այս ձևից, մեզ հայտնի են կարտոֆիլի երիտասարդ պլանտներն արտադրության պայմաններում մասսայաբար ձեռնարկելու երկու եղանակ:

Առաջինը ակադեմիկ Տ. Ի. Լիսենկոյի առաջարկած եղանակն է: Վաղ գարնանը ցանված կարտոֆիլի հողամասը նա դիտում է

որպես սերմագաշտ՝ ամռանը նրկրորդ ցանք կատարելու համար և առաջարկում է կարտոֆիլի բերքահավաքը կատարել ոչ ուշ, քան հունիսի 15—20-ը: Բույսերի տակ հողում ծլած-ալյատերված պալարները խիստ արգելվում է գործածել որպես սերմացու: Նա առա-



Նկ. 2, Հողում մայր բույսի վրա ծլած և ամռան ցանքի համար պատրաստ պալարներ

ջարկում է հինգ գրամ ու ավելի քաշ ունեցող և հողում չծլած առողջ պալարները ծրեցման դեպքում մալթ շինքում: Կարտոֆիլը դաշտից

դյուղ տեղափոխելիս պալարներն անպայման պետք է ծածկված լինեն արևից, որպեսզի պալարի մաշկը չչորանա, չպնդանա և չնպաստի հետադաշում պալարի ուշ ծլման: Այն շենքը, որտեղ պետք է կատարվի կարտոֆիլի երիտասարդ պալարների ձկնցու- մը, պետք է ունենա 15—20 աստիճան ջերմութուն: Ավելի բարձր ջերմության դեպքում դիշերները պետք է շենքի պատու- հանները և դռները բացել՝ օդափոխութան և ջերմութունը կա- նոնավորելու համար: Թարմ պալարները կարող են ձկել միայն առատ օդ (թթվածին) լինելու դեպքում: Ուստի պալարները մասսայաբար ձկնցնելու համար պետք է առատ օդ տալ, որի համար շենքում անհրաժեշտ է կարտոֆիլի կույտը տեղափոխել ճաղափոր տախտակամածի վրա կամ 10—15 սանտիմետր հաս- տությամբ մի շերտ խողովի մատերի (արջաղ) վրա: Կարտոֆիլը պետք է փռել 60—80 սանտիմետր հաստության և 1—1,2 մետր լայնության շերտով, իսկ երկարութունը՝ ըստ պահանջի ու շենքի հարմարության:

Կարտոֆիլի կույտը պատրաստելուց հետո ձկնցվող սերմա- ցուի երեսը պետք է ծածկել խոնավացրած պարկերով, ճիլո- պով կամ հացարույսերի (ցորեն, գարի) ծղոտով: Շենքում պալարները պետք է պահել 25—30 օր: Այդ ժամանակամիջոցում պալարներն սկսում են ձկել, իսկ եթե չեն ծլում, կամ շատ քիչ են ծլում, պետք է կարտոֆիլի կույտի վրա ցնցուղով քիչ քանա- կությամբ ջուր շաղ տալ: Պալարների 70—80 տոկոսը ձկելուց հետո պետք է լավ ծլած պալարները ջուր և տեղափոխել մե ալ լուսավոր, բայց ոչ արևոտ շենք, այնտեղ փռել մեկ պալարի հաստության շերտով՝ յարովիղացիայի հնթարկելու համար: Չծլած պալարները պետք է թողնել նույն շենքում՝ ձկելու համար: Առաջին ընտրությունից 5—10 օր հետո մնացած պա- լարներին նորից պետք է կատարել ընտրություն և դնել յարո- վիղացիայի՝ մինչև ցանքը: Ծլած կարտոֆիլը յարովիղացիայից հետո պետք է զգուշությամբ տեղափոխել: ցանքի վայրը և տնկել արատ արված հողամասում:

Կարտոֆիլի երիտասարդ պալարները մասսայաբար ձկնց- նելու երկրորդ եղանակն առաջարկվել է մեր կողմից, որի էու- թյունը հետևյալն է:

Երկար մեզեռացիա ունեցող տաք ռայոններում գարնանը վաղ ցանված կարտոֆիլի բերքահավաքը պետք է կատարել հուլիսի 20—25-ին, թփի տակ արդեն ծլած պալարներն իսկույն

օգտագործել երկրորդ ցանք կատարելու համար, և եթե սերմացուի պահանջ կա, արհեստական պայմաններում ծլեցնել համեմատաբար հասունացած, 20 գրամից ավելի բարձր քաշ ունեցող չծլած պալարներ: Ծլեցնելու համար պետք է օգտագործել միանգամայն առողջ, քերծվածքներ կամ վնասվածքներ չունեցող պալարներ: Իներքահավաքին զուգընթաց տեսակավորված երիտասարդ չծլած պալարները դաշտից տեղափոխվում են այն հողամասը, որտեղ տվյալ տնտեսութունը մտադիր է ցանք կատարել երկրորդ անգամ: Այդ հողամասերի մի որևէ անկյունում (նայած հարմարութեանը) մի փոքր հարթ տարածութուն ջրվում է, և հողի քեշի ժամանակ փորվում են փոքրիկ փոսեր: Փոսի խորութունը պետք է լինի 15—20 սանտիմետրից ոչ ավելի, լայնքը՝ մեկ մետր, իսկ երկարութունը՝ 2 մետր: Փոսերի թիվը պայմանավորված է ցանքի համար օգտագործվող սերմացուի քանակութեամբ:

Երիտասարդ պալարները լցնում են պատրաստված խոնավ փոսը՝ հզրից 2 սանտիմետր պակաս և կարտոֆիլի վրա ցնցուղով (չուրաքանչյուր փոսին մեկ գույլ) ջուր շաղ տալիս, այնուհետև ծածկում են չոր ծղոտի (արգելվում է գործածել խոտ կամ մուրախոտեր) 2 սանտիմետր հաստութեան շերտով, դրա վրա ավելացնում են փոսից հանված խոնավ հող՝ միայն 7—10 սանտիմետր հաստութեամբ և ոտքով կամ տախտակի միջոցով ամուր պնդացնում: Հողաշերտը ջրով թեթևակի թրջում են, ապա բարակ (1 սանտիմետր հաստութեամբ) սվաղում և խոտով ծածկում, որպեսզի սվաղը շուտ չչորանա և ճեղքեր չառաջանան: Փոսի երեսը պետք է պահել խոնավ վիճակում, դրա համար օրը մեկ անգամ (կեսօրին) փոսի երեսը շատ թեթև թրջում են այնպես, որ ջուրը չանցնի մինչև կարտոֆիլի շերտը:

Փոսերում ծլեցման դրված կարտոֆիլի կուլտի մեջ ջերմութունը լինում է համեմատաբար բարձր (25—32 աստիճան), իսկ օդի (թթվածնի) քանակութունը՝ պակաս:

Վերահիշյալ պայմաններում կարտոֆիլի երիտասարդ պալարները փոսերում մասսայաբար ծլում են 8—13 օրում: Ըստ մեր գիտողութունների՝ այդ պայմանները փոսերի մեջ նպաստում են կարտոֆիլի պալարների անհամեմատ արագ ծլելուն: Մասսայական ծլումից հետո, ծլած կարտոֆիլը փոսերից հանում և օգտագործում են ցանքի համար:

ԿՄՐՏՈՑԻՒ ԱՄՌԱՆ ՑԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՍԵՐՄԱՐՈՒ-
ԾԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Կարտոֆիլի ամառային ցանքին մեր սեսպուրիկայի աշխատավորութունը ծանոթ է 1939 թվից: Չնայած որ լեռնային կարտոֆիլացան ուսյունների աշխատավորութունը վաղուց մշակում է այս գարնանային կուլտուրան և ձեռք է բերել որոշակի հաջողութուններ կարտոֆիլի բարձր բերք բտանալու ուղղությամբ, բայց և այնպես ամառային ցանքին վերաբերող մի շարք հարցեր դեռևս լիովին չեն յուրացված:

Անհրաժեշտ է նշել, որ կարտոֆիլի ամառային ցանքից ստացվում է լավորակ սերմացու՝ դարձան ցանքի համար: Այս միջոցառումն օգտագործելու շնորհիվ, հնարավոր է դառնում բարձրացնել կարտոֆիլի բերքատվութունը, հատկապես մեր սեսպուրիկայի նախալեռնային և բամբակացան շրջաններում: Այդ բացատրվում է նրանով, որ կարտոֆիլի բույսի աճեցողութունն ու պալարագոյացման շրջանը համընկնում են համեմատաբար ցածր ջերմության և կարճ օրերին: Այդպիսի պայմանների մեջ չի լինում կարտոֆիլը դարձան ցանքի դեպքում. նրա աճն ու պալարագոյացումը համընկնում են բարձր ջերմության և համեմատաբար երկար օրվա, որի պատճառով էլ գարնան ցանքից ստացված բերքը լինում է ցածր և տալիս է մանր ու վատորակ սերմանյութ:

Հայաստանի լեռնային ու նախալեռնային ուսյուններում կարտոֆիլի ամառային ցանքը կատարվում է նախորդ տարվա ամառային բերքից պահված սերմացուով: Բամբակացան ուսյուններում և երևանի քաղաքամերձ անտեսութուններում ամռան ցանքի համար օգտագործում են նույն տարում գարնանը ցանված կարտոֆիլի երիտասարդ պալարները, նախապես ծլեցնելուց հետո:

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԱՄՌԱՆ
ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՑԱՆՔԸ

Ամռան ցանքի համար վճռական նշանակություն ունի հողամասը ժամանակին նախապատրաստելը: Անհրաժեշտ է զրա համար առանձնացնել աշնանը ցրտահերկ արված հողամասեր: Աշնան խոր հերկի (27—30 սանտիմետր խորությամբ) միջոցով

հողն իր մեջ մեծ քանակութեամբ խոնավութիւնն է կուտակուած, ցրտից ոչնչանում են քիսասատունները և զանազան մոլախոտներէ սերմերը: Յրտահերկի ժամանակ առաջացած կոշտերը ձմռանը փշրվում են, հողի մակերեսը հարթվում է և, որ գլխավորն է, մինչև ամռան ցանք կատարելը հողի մեջ մեծ քանակութեամբ կուտակվում են բույսի համար դուրամատչելի սննդանյութեր: Անհրաժեշտ է ցրտահերկը զարնանը փոցխել, որպեսզի հողում կուտակված ջուրը շուտ չգոլորշիանա և պահպանվի հողի մեջ, որ շատ կարևոր է ոչ ջրովի պայմաններում մշակվող բույսերի, առանձնապես կարտոֆիլի ամռան ցանքի համար: Այդ նպատակով առանձնացված հողամասերի վրա առաջացած մոլախոտներն ապրել և մայիս ամիսներին պետք է հեռացնել կուլտիվացիա կամ քաղհան կատարելու միջոցով: Յանքի ժամանակ դաշտը պետք է լինի լավ մշակված և մոլախոտներից միանգամայն մաքուր: Պետք է նկատի ունենալ, որ մոլախոտներով ծածկված աշնանահերկ դաշտերը շատ խոնավութիւնն ու դուրամատչելի սննդանյութեր են կորցնում: Բամբակացան ռայոններում և Երևանի քաղաքամերձ տնտեսութեաններում կարտոֆիլի ամռան ցանքը երիտասարդ պալարներով պետք է կատարել հացբույսերից կամ ընդեղեններից (լոբի և այլն) ազատված հողամասերում: Այս դեպքում նախօրոք պետք է առանձնացնել հացբույսերով դբաղեցրած հողամասերից բերրի դաշտեր և բերքահավաքից անմիջապես հետո ըստ հնարավորութեան պարարտացնել, տալով մեկ հեկտարին 20—30 տոնն փտած դոմազբ կամ հանքային պարարտանյութ՝ 3 ցենտներ ամոնիում սուլֆատ, 3—4 ցենտներ սուպերֆոսֆատ և 1—3 ցենտներ 40 տոկոսանոց կալիումական աղ: Պարարտացումից հետո պետք է կատարել խոր վար՝ 27—30 սանտիմետր խորութեամբ: Եթե հացբույսերից ազատված հողամասը չոր է, սկզբում անպայման պետք է ջրել և հողի քեշը զալու ժամանակ միայն կատարել խոր վար: Չոր հողը վարելիս առաջանում են խոշոր կոշտեր, որոնք հետագայում դժվար են ջարդվում, խանգարում ու ավելի են բարդացնում տարվելիք աշխատանքները: Հերկած հողամասը պետք է փոցխել և անմիջապես մարգոցել: Մարզի լայնութիւնը պետք է լինի 2 մետր 10 սանտիմետր, իսկ երկարութիւնը՝ 20—30 մետր: Մարզի լայնութիւնը պետք է հաշվել մեկ թմբի զազաթից մինչև մյուս թմբի զազաթը: Այդպիսի մարզեր պատրաստվում են նրա համար, որպեսզի տնկված թարմ պալարները հետագա-

յում պարբերաբար ջրվեճ (որ պետք է անպայման կատարել մինչև կարտոֆիլի երիտասարդ ծիլը հողից դուրս գալը) և միաժամանակ հողում ավելորդ խոնավութունն չկուտակվի ու պատճառ դառնա տնկված պալարների փտելուն:

Յանքից 4—5 օր առաջ, մարզոցած արտն անհրաժեշտ է առանձին ջրտարներով ջրեր իսկ կարտոֆիլի ցանքը կատարել անպայման ջրած ու քեշի եկած հողամասում: Չորացած հողում կարտոֆիլի երիտասարդ պալարներով ցանք չպետք է կատարել: Պետք է նշել նաև, որ չոր հողում ցանքը կատարելուց հետո արվող ջուրը որոշ չափով կարող է պատճառ դառնալ տնկված պալարի նեխման: Ահա այս է հիմնական պատճառը, որ բամբակացան շրջաններում ամռան ցանքը պետք է կատարել անպայման նախապես ջրված ու քեշի եկած հողում:

Կարտոֆիլի ամռան ցանքը ճիշտ ժամանակին կատարելը մեծ նշանակությունը ունի մեր ռեսպուբլիկայի տարբեր ռայոնների համար: Հայանի է, որ տարբեր ռայոններ ունեն տարբեր կլիմայական ու հողային պայմաններ. այս տեսակետից ստանդարտ ցանքի ժամկետ տալ բոլոր ռայոնների համար՝ կլինել սխալ:

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Բիոլոգիական ինստիտուտի ուսումնասիրություններից պարզվել է, որ բամբակացան շրջաններում ամռան ցանքը կարտոֆիլի երիտասարդ պալարներով պետք է կատարել հունիսի 20-ից մինչև օգոստոսի 5-ը:

Ջրովի հողամասերում՝ պատրաստված մարզի մեջ կարտոֆիլը ցանվում է երեք շաբաթ, այն է՝ մեկական շաբաթ մերի մոտ և մեկ շաբաթ՝ մարզի մեջ:

Կարտոֆիլը պետք է ցանել 8—10 սանտիմետր խորությամբ, խոնավ հողում: Շարքերի հեռավորությունը պետք է անել 70 սանտիմետր, իսկ շաբաթերում թուփը թփից՝ 30—35 սանտիմետր: Յուրաքանչյուր բնում պետք է ցանել միջակ մեծության մեկ պալար, իսկ փոքր քաշ ունեցող պալարներ՝ երկուսից ոչ ավելի: Յանքը պետք է կատարել միայն «Լոբի» սորտի ծլած պալարներով:

ԱՄՌԱՆ ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

Ջրովի հողամասերում, ցանքից մի քանի օր հետո, հատկապես բամբակացան ռայոններում, երբ հողն սկսում է չորանալ,

անհրաժեշտ է պարբերաբար ջրել: Առաջին ջրից հետո անհրաժեշտ է փոցխել կամ տափանել ցանված դաշտը, որպեսզի հողի երեսին առաջացած կեղևը փշրվի և փափկանա: Փոցխելու կամ տափանելու ժամանակ հողից դուրս եկած պալարներն անհրաժեշտ է անմիջապես նորից ծածկել: Անհրաժեշտ է ցանված դաշտը միշտ խոնավ վիճակում պահել և ըստ պահանջի ջուր տալ:

Դաշտում կարտոֆիլի հատ ու կենտ ծիլեր երևալուց հետո հարկավոր է փոցխել զեղ-զաղ փոցխի մեկ օղակով: Կարտոֆիլի դաշտը պետք է պահել փուխը և մուխոտներից միանգամայն մաքուր վիճակում: Բույսերի միջշարքային տարածության քաղ-հան-փխրեցումը պետք է կատարել ձիու կուլտիվատորով, իսկ միջբույսայինը՝ հողբարձներով կամ քեթմեններով: Կարտոֆիլի ամռան ցանքի բույսերի բուկը պետք է սալ ոչ այնպես խոր, ինչպես դարձան ցանքինը, այլ թեթև՝ 15—20 սանտիմետր բարձրությամբ:

Ամռան ցանքի բերքը սովորաբար հավաքվում է նոյեմբերի կեսերին: Ելնելով նշված ժամկետից, կարտոֆիլի ցանքի ջուրը պետք է դադարեցնել բերքահավաքից 15—20 օր առաջ: Ամռան ցանքի բերքը պետք է հավաքել կարտոֆիլի ցողունների լիով ցրտահարումից անմիջապես հետո: Հավաքված բերքը գիշերը դաշտում չպետք է թողնել, որովհետև կարող է ցրտահարվել ու ենթակա լինել զանազան պատահարների: Բերքահավաքը կատարելու ժամանակ անհրաժեշտ է ջոկել սերմացուն, ընտրելով զրա համար միջակ մեծութուն ունեցող ատող պալարներ: Բացի այդ, պետք է հավաքել նաև այն մանր պալարները, որոնք ատող են մնացել և կարող են որպես լրացուցիչ սերմանյութ ծառայել հաջորդ տարվա դարձան ցանքի համար:

ՍԵՐՄԱՑՈՒ ԿՄՐՏՈՅԻՒ ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Աշնանը, բերքահավաքից հետո, կարտոֆիլի սերմացուն պետք է պահել հատուկ խնամքով: Ցանելու համար պետք է ընտրել կարտոֆիլի ատող պալարները, որոնք հանելու ժամանակ փասվածքներ չեն ստացել կամ թե հիվանդ ու փտած չեն:

Սերմացու կարտոֆիլը պետք է պահել բուրտերի (փոսերի) մեջ: Բուրտերի խորությունը պետք է լինի 30 սանտիմետր, լայնությունը՝ 1 մետր, իսկ երկարությունը՝ 4—6 մետր:

Եթե բուրտի երկարությունը 4 մետր է, լայնությունը մեկ

մետր, իսկ խորութիւնը 30 սանտիմետր, ապա աղբայրի բուր-
տում կարելի է տեղավորել մոտ 1,5 տոնն կարտոֆիլ:

Եթե կարտոֆիլի քանակութիւնը 1,5 տոննից ավելի է,
կարելի է բուրտի երկարութիւնը հասցնել 6 մետրի, իսկ եթե
այսպիսի երկարութիւնն ունեցող բուրտում կարտոֆիլը չի տե-
ղավորվում, պիտի բուրտերի թիվը համապատասխան չափով
ավելացնել. այսպես է արվում այն պատճառով, որ բուրտի եր-
կարութիւնը 6 մետրից ավելի չլինի:

Բուրտի հիմքում, ուղիղ մեջտեղում, բուրտի ամբողջ եր-
կարութեամբ պետք է փորվի առու, որի խորութիւնն ու լայ-
նութիւնը պետք է լինի 20 սանտիմետր: Առուն շատ կարևոր
է կարտոֆիլի բուրտում օդափոխութիւն ստեղծելու համար:
Առվի երեսին պետք է դասավորել փայտե ձողիկներ՝ միմյան-
ցից 2,5 սանտիմետր հեռավորութեան վրա: Ձողիկները դրվում
են նրա համար, որպէսզի բուրտի մեջ լցվող կարտոֆիլի պալար-
ները չթափվեն օդանոս առվի մեջ:

Բուրտը պետք է փորել առուններից հեռու, ջրերով ողող-
վելու վտանգից ապահով և ոչ գողավոր վայրում: Այն պետք է
պատրաստել դաշտում կամ կոլխոզի պահեստի մոտ. ուղղու-
թիւնը պետք է լինի հյուսիսից դեպի հարավ:

Բուրտը փորելուց հետո նրա յուրաքանչյուր ծայրում,
հիմքի օդափոխ առվի վրա պետք է դնել տախտակից պատ-
րաստված մեկական օդափոխ խողովակ: Խողովակի ներքևի
ծայրը թաղված պետք է լինի կարտոֆիլի մեջ, վերևի ծայրը
դուրս գա 80 սանտիմետր բարձրութեամբ: Խողովակի ներքևի
ծայրը, կարտոֆիլի ամբողջ շերտի հաստութեամբ, պետք է ունե-
նա կտրվածքներ: Խողովակի լայնութիւնը պետք է լինի 20
սանտիմետր:

Կարտոֆիլը բուրտում պետք է դասավորել բրգաձև: Կար-
տոֆիլի բուրգի բարձրութիւնը պետք է լինի մեկ մետր:

Կարտոֆիլը դասավորելուց հետո պետք է ծածկել ձողտով,
որի վրայից պետք է հող լցնել ու տախտակով ամրացնել: Հողի
շերտի հաստութիւնը պետք է լինի գագաթի մոտ՝ սկզբում 10
սանտիմետր, ցրտերն ընկնելու ժամանակ՝ 25 սանտիմետր, իսկ
հիմքի մոտ՝ սկզբում 30 սանտիմետր, ցրտերն ընկնելու ժամա-
նակ՝ 70 սանտիմետր:

Բուրտը ձողտով ծածկելուց առաջ, կարտոֆիլի կույտի
գագաթին, յուրաքանչյուր երկու մետրի վրա պետք է դնել 0,5
մետր երկարութեան փակ խողովակներ, որոնց լայնութիւնը

պետք է լինի 20 սանտիմետր (խողովակի կտրվածքը՝ 20×20 սանտիմետր):

Բուրտի երկու ծայրերում դտնվող խողովակներում, ինչպես նաև մեջտեղի խողովակներից մեկում, պետք է դնել մեկական ջերմաչափ՝ բուրտի ջերմությունն ստուգելու համար:

Ցուրտ ամիսներին օդափոխ խողովակների անցքերը պետք է ամուր վաղել խոտից պատրաստված խցաններով:

Առաջին 25 օրում ջերմության ստուգումը պետք է կատարել ամեն օր, այնուհետև՝ 5 օրը մեկ անգամ:

Եթե բուրտի մեջ ջերմությունն իջնում է 1⁰-ի, ապա պետք է տաքացնել լցնելով բուրտի վրա ձյան կամ գոմաղբի հասաշերտ: Պետք է նաև բուրտի վրա առաջացած ձեղքերը սվաղել:

Եթե բուրտի ջերմությունը բարձրանում է +4⁰-ից, ապա պետք է քացել ծայրամասերի ու գազաթի վրա դրված օդափոխ խողովակների անցքերը, սրբել բուրտի վրայի ձյունը կամ գոմաղբը և աստիճանաբար թեթևացնել բուրտի հողաշերտը, իսկ եթե այդ էլ չի օգնում, և բուրտում ջերմաստիճանը բարձրանում է, պետք է քացել բուրտը և կարտոֆիլն անմիջապես տեղափոխել պահեստ:

Բուրտի շուրջը, նրանից մեկ մետր հեռավորության վրա, պետք է առվակ անցկացնել՝ անձրևաջրերը հեռացնելու համար:

Ինչպես արդեն ասել ենք, կարտոֆիլը ցանելուց առաջ պետք է ենթարկել յարովիղացիայի: Դրա համար սերմացուն փետրվարի 10-ին պետք է հանել բուրտից, ընտրել առողջ պալարները և տեղափոխել տաք, լուսավոր, բայց ոչ արևոտ պահեստ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԿԱՐՏՈՑԻԼ ՉՄՈՒՆԸ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Պարենային կարտոֆիլը տնային պայմաններում պահելու համար պետք է ընտրել ցածր ջերմության (պլյուս 1-ից մինչև 3⁰) պահեստատեղ: Այդ նպատակին կարող են ծառայել ներքնահարկերը, նկուղիները և այլն: Կարտոֆիլը կարելի է պահել նաև բակում, եթե տվյալ տնտեսությունն այդ հարմարությունն ունի:

Լավ են ձմեռում առողջ, չքերծված և մի քիչ ցամաքացրած պալարները: Ձի կարելի պահելուց առաջ կարտոֆիլի պալարները լվանալ: Սովորաբար կարտոֆիլը պահվում է մութ տեղ: Երկաթ ժամանակ լույսի տակ ֆնալով՝ կարտոֆիլի պալարները կանա-

չում են, որի հետևանքով ընկնում է նրանց որակը և վատանում է համրը:

Սենյակի պայմաններում կարտոֆիլը կարելի է պահել միայն այն դեպքում, երբ ջերմությունը լինում է ոչ ավելի, քան պլյուս 3⁰. բարձր ջերմությունից կարտոֆիլը շուտ ծլում է, չմշկվում և փտում: Սենյակում, նկուղում, ներքնահարկերում կարտոֆիլը կարելի է պահել ճաղավոր արկղների կամ անցքեր ունեցող կողոմների մեջ:

Եթե հնարավոր է կարտոֆիլը պահել բակում, պետք է ընտրել մի հարթ տեղ, փոս փորել, որի խորությունը պետք է լինի 20—25 սանտիմետր, լայնությունը՝ 0,5 մետր, երկարությունը՝ 1 մետր կամ ավելի: Փոսի երկարությունը կախված է կարտոֆիլի քանակից, բայց պետք է լինի ոչ ավելի, քան 2 մետր: Փոսի մեջ լցվում է կարտոֆիլը 60 սանտիմետր հաստության շերտով, այսինքն՝ հողից 40 սանտիմետր վերև, վրան՝ հիմքից մինչև դադաթը՝ լցվում է 3 սանտիմետր հաստության ցորենի կամ զարու չոր ծղոտ. հողի ծածկույթի շերտն սկզբում լինում է բարակ՝ 15—20 սանտիմետր, բայց երբ ցրտերն ընկնում են, հողի շերտի հաստությունը հիմքում պետք է հասցնել 40—45 սանտիմետրի, իսկ դադաթի մասում՝ 25 սանտիմետրից ոչ ավելի: Փորվածքի կողքից կարելի է պատրաստել կրկնակի փոքրիկ փայտե դռնակ՝ ձմռան ընթացքում կարտոֆիլ հանելու համար: Ամեն անգամ այդ դռնակը պետք է ծածկել ծղոտից կամ մոլախոտից խիտ պատրաստված, տաքություն պահող խրձով:

Քարնանը, տաքությունն ընկնելու ժամանակ, բուրտի ծածկույթը պետք է թեթևացնել, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է հանել կարտոֆիլը և տեղավորել որևէ շենք, որտեղ ցրտահարության վտանգ չկա: Ձմռան ընթացքում անհրաժեշտ է մթերել պարենային կարտոֆիլի առողջ մեծ պալարներից դադաթներ՝ 15—20 գրամ քաշով՝ վարնան ցանքի համար: Փագաթները պետք է պահել ներքնահարկերում՝ պլյուս 2 աստիճան ջերմության պայմաններում, կողովի կամ ճաղավոր արկղների մեջ:

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

Մեր լեռնային խոնավ շրջաններում (Ստեփանավանում, Կիրովապանում և այլն) կարտոֆիլը մեծ մասամբ վարակվում

է ֆիտոֆտորա ինֆեւտանս սնկով: Առանձին խոնավ տարի-
ներում այս հիվանդութիւնը շատ մեծ ֆլաս է հասցնում կար-
տոֆիլի բույսին, որից ընկնում է նրա բերքը:

Յածրադիր ուայոններում, ինչպես և Երևանի քաղաքամերձ
տնտեսութիւններում, այս հիվանդութիւնը գրեթե չի նկատ-
վում և առանձին ֆլաս չի պատճառում: Այդ հիվանդութիւնն դեմ
պայքարում են մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով:

Քաղաքամերձ տնտեսութիւններում տարածված են «սև
ռախիկ», «ֆուզարիոզ», «օղակային փտում» բակտերիալ և սնկային
հիվանդութիւնները:

«Սև ռախիկով» հիվանդ բույսերի ցողունի հիմքը հողում
սևանում է և հետագայում նեխում: Այգալիսի թուփը հեշտու-
թյամբ հողից դուրս է քաշվում: Սովորաբար հիվանդ թփերը
նվաղ և գաճաճ են լինում, շուտ դեղնում և վաղաժամ չորանում
են:

«Փուզարիոզով» և «Թառամումով» հիվանդ բույսերի պա-
լարներն ամբողջովին նեխում են: Այս հիվանդութիւնը հաճախ
պատահում է ծանր կապային և գերխոնավ հողերում:

Պայքարի հիմնական միջոցն այն է, որ պետք է արմատախիւ
անել վարակված թփերն ու հողում գտնվող վարակված պալար-
ները և այդ բոլորն այրել:

«Վիրուսով» հիվանդ բույսերը լինում են դաճաճ և թույլ
զարգացած: Այս հիվանդությամբ վարակված բույսերի արտաքին
տեսքն այլանդակված է (կնճռոտված, գանգոտ, և այլն): Հի-
վանդ պալարներից ստացվում են նվաղ և գաճաճ բույսեր, ու-
րոնց տերևները մեծ մասամբ ոլորված են ու փխրուն՝ ձեռքի
մեջ ջարդվում են: Այդ բացատրվում է նրանով, որ օսլան
ֆնում է տերևների մեջ և չի անցնում բույսի մյուս օրգանները:
Պայքարի համար անհրաժեշտ է՝

1. Յանքի համար օգտագործել միանգամայն առողջ պալար-
ներ, որոնք յարովիղացիայի ժամանակ տալիս են հաստ ու
կարճ ծիլեր:

2. Յանքի համար չօգտագործել կարտոֆիլի այն պալար-
ները, որոնց աչքերից դուրս եկած ծիլերը մաղի պես բարակ են:

3. «Վիրուսով» վարակված թփերը, ինչպես և հողում
առաջացած նրանց պալարները ցանքից պետք է արմատախիւ
անել և այրել:

1. Տ. Սահակյան—Կարտոֆիլի սորտերը Հայաստանում և նրա հիվանդութունները, հրատ. Արմֆանի, Երևան, 1939 թ.
2. Максимович, М. М. Методы ускоренного размножения картофеля и их применение в селекционно-семеноводческой работе, Огиз-сельхозгиз, Москва, 1938 г.
3. Акад. Лысенко, Т. Д. Подготовка свежееубранных клубней картофеля летник посадок. Газета „Коммунист“ от 12 июня 1941 г. № 136 (2087). Орган ЦК и ЕК КП(б) Армении, Ереван.
4. Гер-Саакян, Т. С. Новый метод снятия периода покоя у свежееубранных клубней картофеля. ДАН СССР, 1941 г., т. XXX, № 2. Изд. АН СССР, Москва.

ԳՐԱՎԱՆԴ ԱՎՈՒԹՅՈՒՆ

	12
Սոաջարան	3
Ինչպիսիք հողերում կարող է մշակվել կարտոֆիլը	5
Կարտոֆիլի սորտերը	5
ա) էպիլուր	6
բ) Վաղահաս վարդագույն	6
գ) Լորի	7
Սերմացուի նախապատրաստումը և բազմացումը գարնան ցանքի համար	8
Հողամասի մշակումը և պարարտացումը	11
Ցանքի ժամանակն ու եզանակը	12
Գարնան ցանքի խնամքը	13
Կարտոֆիլի բերքահավաքը	16
Կարտոֆիլի երկու բերքի ստացումը մեկ տարում	17
Կարտոֆիլի ամռան ցանքը որպես սերմնաբուծական կարևոր միջոցառում	23
Հողամասի նախապատրաստումն ամռան ցանքի համար և ցանքը	23
Ամռան ցանքի խնամքը	25
Սերմացու կարտոֆիլի ձմեռային պահպանումը	26
Ի՞նչպես պահել պարենային կարտոֆիլը ձմռանը տնային պայմաններում	28
Կարտոֆիլի գլխավոր հիվանդությունները և նրանց դեմ պայքարելու ձևերը	29

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008232

ԳԻՆԸ 6 Ա.

A $\frac{\text{II}}{18921}$

АРМЯНСКИЙ ФИЛИАЛ АКАДЕМИИ НАУК СССР
СЕКТОР ПОЧВОВЕДЕНИЯ

Естественно-научная популярная серия

Т. С. ТЕР-СААКЯН

Культура картофеля в Араратской долине

Издание Армфан. Ереван, 1948 г.

ՀՖ 02563

Գրառվեր № 309

Տիրաժ 2000

ՀԺԿ-ի Գրաս-մանկավարժական տպարան, Արտվյան, 104